

ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 5-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում (Աստվածաբանական համալսարան) տեղի ունեցավ ավարտաճառերի պաշտպանություն։

Հինգ ճեմարանավարտ սարկավագներ հաջողությամբ պաշտպանեցին իրենց ավարտաճառերը հետևյալ թեմաներով. «Բանադարձումները Վազգեն Ա Կաթողիկոսի քարոզներում» (Ավետիք սրկ. Հովհաննիսյան), «Գրաբարի բայի ժամանակային ձևերի իմաստային-ոճական կիրառությունները քառավետարաններում» (Հովհաննես սրկ. Ազնավուրյան), «Հայ Առաքելական Եկեղեցու ազգապահ դերի իմաստավորումը Լևոն Շանթի «Օշին Պայլ» դրամայում» (Դավիթ սրկ. Սարգսյան), «Խոսքը և նրա նշանակությունը հոգևորականի կյանքում» (Կարեն սրկ. Հովհաննիսյան), «Նախադրությունների իմաստային առումներն ըստ քառյակ Ավետարանների» (Արմեն սրկ. Հմայակյան)։

Հուլիսի 17-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում (Աստվածաբանական համալսարան) վեց ճեմարանավարտ սարկավագներ հաջողությամբ պաշտպանեցին իրենց ավարտաճառերը հետևյալ թեմաներով. «Պետրոս Հռոմկլայեցի Կաթողիկոսի 1747-1748 թթ. կյանքն ու գործունեությունը» (Էդգար սրկ. Հովհաննիսյան), «Մատենագիտություն «Սիոն» ամսագրի 1981-1990 թթ.» (Մհեր սրկ. Մուրադյան), «Մատենագիտություն «Սիոն» ամսագրի 1991-2000 թթ.» (Պետրոս սրկ. Գումբալյան), «Սիմեոն Ա Երևանցին (կթող. 1763-1780 թթ.) և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչական գործունեությունը 1771-1794 թթ.» (Հայկ սրկ. Թադևոսյան), «Հայ-ասորական առնչությունները Զ դարում» (Ցոլակ սրկ. Հարությունյան), «Արարատյան Հայրապետական թեմի թեմապատկան եկեղեցիները» (Արտակ սրկ. Նուրիջանյան)։

Հունիսի 23-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում (Աստվածաբանական համալսարան) երեք ճեմարանավարտ սարկավագներ հաջողությամբ պաշտպանեցին իրենց ավարտաճառերը հետևյալ թեմաներով. «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Հայաստանի Հանրապետության իրավական փոխհարաբերությունները» (Թաթուլ սրկ. Համբարձումյան), «Հուդա Իսկարիովտացին հայ եկեղեցական մեկնողական-աստվածաբանական մտքի մեջ» (Միհրան սրկ. Գաբրիելյան), «Ամուսնության պայմաններն ու ամուսնալուծությունը Հայ Եկեղեցում» (Մհեր սրկ. Եսայան)։

Այսուհետ շրջանավարտ այս բոլոր սարկավագները կհամալրեն Սուրբ Էջմիածնի միաբանության շարքերը։

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ